

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ

Երբ խաբվել եմ կրկին,
մտոք քնծիծաղ եմ տվել՝ հասկանալով,
որ գյուղական անմշակ իմ բնույթով մարդուն
հազիվ թե փրկեր անգլիական արքունիքում
դաստիարակվելու դիպվածն անգամ:
Շատերն են բավարարել իրենց հագուրդը՝
լինելու ինձ խրատատու և ուսուցիչ:
Ուն սիրել եմ, չեմ կարողացել պարզորոշ
արտահայտել այն, ինչպես սիրավեպերում,
իսկ ապացուցելու համար էլ, ցավոք,
ժամանակս երբեք չի հերիքել:
Այսպես հասել եմ չորեքտասան,
կանգառներով, բայց առանց դադարի,
թեև հաճախ եմ ետ նայել,
սակայն առաջ գնալու համար
ոչ մի նախագիծ ու մակետ չեմ ունեցել:
Չեմ հարցրել ոչ ոքի,
թե այս ճամփան ո՞ր է տանում,
ու որևէ մեկի ետևից չեմ քայլել,
որովհետև ծոծրակներին նայել
երբեք չեմ կարողացել:

ՊԱՏԱՅԱԿԱՆ ՍԵՐ

Պաղ գիշերվա մեջ ես դեգերում եմ ուխտավորի պես՝
Գտնելու կյանքի լույսը կենարար՝ հրեղեն ու ջինջ,-
Նախաստեղծ ոգու զորությամբ լցված՝ հեթանոսի պես
Ձենում եմ խոհեր, մանուկ երազներ, ամեն, ամեն ինչ:
Պատահականը առաջ է ընկնում ու դուռդ թակում.
Նյարդերդ հյուծում իր ծուլ բթությանը անվերջանալի.
Բնագոյով արթուն մտքիդ դռներն ես կուրորեն փակում
Ու դառնում մարդուկ՝ գազիր մտքերով անիմանալի:
Բախտից խռոված, պահին՝ ապավեն, գալարումներով
Մտնում ես կյանքի խորշերը բուրդ իբրև բարեկամ,
Անհավատարիմ մարդկային գոյի ոխը պահելով՝
Գնում ես, գնում ու շուտով դառնում հիսուն տարեկան:
Հոգուս ծալքերում լոկ սերն է մնում ջինջ ու անարատ.
Թեև այդ սիրո պատճառով միայն մեծ վիշտ կրեցի.
Այս հին աշխարհում սերը ծախեցին իբրև երազանք,
Ու դրա դիմաց ես էլ իմ մաքուր սիրտը տվեցի:
Հիմա գնում եմ անսիրտ ու անսեր ու նաև՝ մերժված.

Ոնց հավատացի նրա խոսքերին ես հիմարի պես.
Թող մնա անհայտ ու անգերեզման իմ սիրտը խոցված,
Որ զգուշանան անմեղ սրտերը, չխաբվեն ինձ պես: